

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

1802 թ. 16 եպիսկոպոս և վարդապետներ Աղթամարի կարապետ կաթողիկոսի հետ ժողով կազմելով Սիւնհոգոս անուամբ Յունուար 25-ին¹ Դանիէլին ամենայն Հայոց կաթողիկոս օծեցին: Եւ այնուհետեւ Աղթամարի կարապետ կաթողիկոսը, Տաճկաստանի առաջնորդներից ոմանք և նշանաւոր վանքերի վանահայր եպիսկոպոսները, թւով 16, շրջաբերական են ուղարկում բոլոր հայերին², միայն օրինուոր կաթողիկոս ճանաչել Դանիէլին, իսկ Դաւթին և իւր ձեռնադրած եպիսկոպոսներին և այդ եպիսկոպոսներից ձեռնադրուած քահանաներին ապօրինի: Այդ է շրջաբերական, Դաւիթ և Դանիէլ կաթողիկոսների ժամանակի պատմութեան վերայ իբրեւ մի լոյս ձգող կէտ, հրատարակում ենք «Արարատի» միջոցաւ: Սոյն իսկական ձեռագիրը խմբագրու թիւնս ստացել է Էջմիածնի միաբան Արթ. Եղիա վարդապետ Հասան-Չալալեանից:

Փրկչագործ տնօրէնութեանն քրիստոսի սուրբ տեղեաց, և կոստանդնուպօլսոյ մայրաքաղաքի քրիստոսատիպ այցելուաց Տեառն Թէոդորոսի, և Տեառն Գրիգորի սրբազան պատրիարգացն, նաև համօրէն ազգիս հայոց առաքելաշաւիղ առաջնորդաց, արհիպատում եպիսկոպոսաց, աստուածաբան վարդապետաց, մաքրագործ քահանայից և համայն գղերիկոսաց՝ աւխտի մանկանց սուրբ եկեղեցւոյ. ընդորս և բարեպաշտօն աստուածասէր իշխանաց և իշխանապետաց և առ հասարակ ամենայն ազգիս հայոց մեծաց և փոքունց՝ քրիստոսական ողջունիւ սուրբ սիւնհոգոսիս մերոյ՝ յայտ արարութիւն լիցի:

1. Ներսէս V աշտարակեցին վարդապետ ժամանակ ժողովեաց Աղէքսանդր Երիցեան բ. երես 14 ղնում է 1802 ին Մայիս 25-ին. 2. և 28-ին՝ դրում է—ամեն կողմի հայոց շրջաբերականներ ուղարկուեցաւ:

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ս Ր Բ Ա Չ Ա Ն Ս Ի Ի Ն Հ Ո Դ Ո Ս Ի Ո :

Բ Ա Ն . (Ա) .

Ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի միջի նոցա, ասաց քրիստոս տէրն մեր, վասնորոյ և ի ժամանակիս յայսմիկ մինչ ձեռնարկեաց ամենաչարն՝ խարբալել զեկեղեցի սուրբ, յանուն յիսուսի քրիստոսի Տեառն մերոյ՝ ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ քահանայից և այլ ժառանգաւորաց, ի յերեք վանք կոչեցեալ սուրբ ուխտս՝ որ յըստորոտ նպատ լերինն ի բազրեանդ գաւառի՝ առ ափն եփրատայ. անդ՝ ուր մկրտեաց սուրբ լուսաւորիչն մեր զմեծն տրդատես և զաշխէն տիկինն և զխոսրովիդուխտ և զգունդն հայոց բիւրս չորս հարիւր՝ հանդերձ ամենայն նախարարօքն և աւագայնովքն, և երեւցաւ սիւն լուսոյ և խաչ լուսեղեն ի գլուխ նորա, ուր և մատուցեալ զփրկական սուրբ պատարագ՝ հաղորդեաց զնորածնեալսն սուրբ մկրտութեամբն ի կենարար մարմնոյ և յարենէ որդւոյն աստուծոյ. և աստ ի մէջ զքանչելահրաշ սրբոյ տաճարիս կառուցելոյ յանուն յօհաննու. այն է տրդատայ արքայի մերոյ. առաջի սրբութեան սեղանոյն՝ վկայութեամբն աստուծոյ, և սուրբ աւետարանին նորա՝ ուղիղ ակնարկութեամբ ի հանդէս մատուցեալ՝ քննեցաք զդատաստան դաւթի [Թիֆլիզեցոյ՝ որ անձնընծայ եղեալ անուանեցաւ կաթողիկոս հայոց՝ յամի Տեառն 1801 ի 23 ապրիլի, յորմէ և այսր՝ ոչ երբէք տեսանէ եկեղեցիս հայոց զերեսս խաղաղութեան, զորս վայելէր առատապէս յերեկն և յերանչն. և ի զննին եղեալ՝ համեմատութեամբ աւետարանական բանից և գրոց մարգարէական և առաքելական, ծանեաք զնա ամենեւին խոտորեալ ի շաւղաց կենարար վարդապետութեան նոցին, և հետախոյզ քննութեամբ կանոնաց հարցն սրբոյ առաջնոց, և բարեք վերահասութեամբ քանի քանի՝ բազմօրինակ բազմակնիք գրութեանց քահանայակարգ միաբանութեանն սրբոյ աթոռոյն էջմիածնի, գտաք զնա իսկապէս ի դատապարտութեան եկեղեցւոյ. և անվաւեր օծութիւն նորա. և զի մի համառօտն ընթացեալ ի տարակուսի թողուցումք զմիտս այնոցիկ որք թարց տեղեկութեան պարագային՝ միայն պարզմտօք ընկալեալ զնա զառաջինն որպէս կաթողիկոս՝ վաւերական օծութեամբ, գայթակղեցին վասն դատաստանի սուրբ սիւնհոգոսիս մերոյ, առաջի առնել գրով և ստորագրութեամբ մեր՝ արժան համարեցաք. որպէս զի լաւ վերածանութեամբ իրացն հանգամանաց՝ սրբեցի խիղճ մտաց ամենայն հասարակութեան հեռաւորաց, և մերձաւորաց ազգիս մերոյ, և մնացէ այնպէս՝ վասն հաստատութեան սուրբ եկեղեցւոյ, ի յիշատակ անջնջելի՝ յապայտ ժամանակի...

ԿԱՆՈՆՔ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ:

ԲԱՆ. (Բ).

Արդ՝ ի սկզբան անդ խնդրեցաք զկանոնս վասն ընտրութեան կաթողիկոսի և գտաք ի գլուխս գրքոյն օծութեան կաթողիկոսի՝ գրեալ այսպէս. — « Երբեքմ չանդերձեալ լինին բարձրացուցանել զոք ի պատիւ կաթողիկոսութեան տանս հայոց, բոլոր ժողովուրդք հայասեռ ազինս՝ չանդերձ ամենայն ժառանգաւորքն երկոտասան եպիսկոպոսօք ժողովեալ ի մի ընտրեսցին նախ զերիս. և ապա զննութեամբ ամենայն ժողովոյն որոշեալ վերստին և զմինն յերից վկայեալ յամենայն գործս բարիս, և ի վարս առաքինիս. սուրբ և անարատ. լի գիտութեամբ և իմաստութեամբ. և մի լիցի ի հաւատս թիւր. ի բարս ժանտ. ի վարս անուղիղ. և ի բանս անհաստատ. մանաւանդ ևս մի լիցի անձնընծայ և ընտրեալ արծաթով ի ձեռն կաշառաց՝ յայլ ազգի իշխանաց. զի պիղծ է այնպիսին առաջի աստուծոյ, և բանադրեալ իսկէ... Այլ և գտաք ընդհանրական գիրս սրբոյն ներսէսի շնորհալոյն ի չորս գլուխն, և ի խ. Գ. երեսն, ուր ընդ երկար գրէ, որ միւս ևս՝ դաւիթ անուն եպիսկոպոս, այնպէս յաշառանօք՝ բռնութեամբ և ի ձեռն կաշառաց ընկալեալ է զօծումն հայրապետական՝ ի գլուխ իւր. այլ բազմութիւն եպիսկոպոսաց, վարդապետաց հարցն վանականաց և միանձանց՝ աւելի քան երկու հազար և հինգ հարիւր անձանց, ընդ որս է և սուրբն ներսէս շնորհալի, և եղբայրն իւր սուրբն գրիգորիս, ժողովեալ ի սեաւ լեառն՝ և մեծաւ սիւնհոգոսիւ դատապարտեալ զնա՝ նըղովեալ և հերքեալ են զնա յեկեղեցւոյ քրիստոսի. և որով բանին աստուծոյ հատեալ զնա որպէս զնեխեալ և զփտեալ անգամ յառողջ մարմնոյ եկեղեցւոյ. գրեալ են և զկանոնս թէ՝ « որք ոչ ընտրութեամբ աստուծոյ և աստուածայնոցն արանց, այլ ինքնաշարժ ախտիւք և բռնականութեան հրամանօք զանձինս իւրեանց բարձրացուցանեն յաստիճան սրբազան քահանայապետութեան ոչ միայն քահանայապետութեանն չեն արժանիք, այլ և ոչ քրիստոնէութեան հաւատոյ. ոչ սրբոյ պատարագի յիշատակութեան, և ոչ օրինաւոր թաղման անգամ՝ չեն ասէ արժանիք:

ԹՈՒՂԹ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՁՄԻԱԾՆԻ:

ԲԱՆ. Գ.

Եւ ըստ այսց տեսաք և ընթերցաք զբազմակնիք թուղթ միաբանութեանն սրբոյ էջմիածնի առ երեւանու խանն. ի 8 ապրիլ 1801. ամի

« փրկչին՝ յառաջ քան զօծանելն դաւթի. յորում գրեալ են թէ՝ «մի
 « բռնադատեսցես զմեզ՝ զայլ մարդ առնել մեզ կաթողիկոս, զի ահա՛
 « մեք երդուեալ եմք ի սուրբ տաճարս և ի սուրբ գեղարդն. և անիծիւք
 « հանգերձ փակեալ եմք, որ մինչև դանիէլ վարդապետի գալն՝ ով ինք-
 « նակամ կաթողիկոս լինիցի, ամեննին անընդունակ է լինելոց» Ընթեր-
 « ցաք ևս և զվկայեալ օրինակս միւս բազմակնիք թղթոյ նոցա ի նոյն թիւ,
 « գրեալ առ կեօրքի խանի որդի դաւիթ խանն, ի թիֆլիզ՝ յորում ևս
 « գրեալ են. « թէ ի կողմանէ սիրելոյն մերոյ դաւիթ եպիսկոպոսէն՝ որ
 « հրամայեալ էիք ընտրել և կ'սցուցանել զնա կաթողիկոս, բարի էր
 « թէպէտ հրաման ձեր, բայց մեք որ միանգամ խնդրեցաք զդանիել սըր-
 « բազան արհիւն գալ ի կաթողիկոսութեան մեզ, դաշնագիր ևս եղաք ի
 « մեջ աստուածեան սրբոյ տաճարիս՝ երդուելով ի կենսատու սուրբ խաչն
 « քրիստոսի, ի նորուն կողմաւս սուրբ գեղարդն, և ի նշանագործ աջ
 « սրբոյ լուսաւորչին մերոյ, զի ի բաց ի դանիէլ սրբազան արհւոյն, զայլ
 « ոք ոչ ընդունիցիմք ի դահակալութիւն սրբոյ թոռոյս և նզով ևս ե-
 « դաք, զի եթէ ոք ի մէնջ ինքնընծայ լինելով բռնութեամբ ձեռնադրես-
 « ցի կաթողիկոս, անիծեալ լիցին յաստուծոյ՝ ինքն և ձեռնադրողքն իւր,
 « Արդ՝ այսպէս հաստատապէս երդուեալ եմք, և սաստիկ նզովիւք փակ-
 « եալ եմք, և չեմք կարող երդմնազանց լինել. թէ և մահ ևս հանդիպես-
 « ցի, Այլ և ընթերցաք և զհամամիտ չորս բազմակնիքս, որոց մինն էր
 « առ սրբազան պատրիարքունս և առ եպիսկոպոսունս և վարդապետս. ևս
 « և՛ առ իշխանս համօրէն ազգիս. յորս գրեալն էր. « թէ յօրէ յայն-
 « մանէ՝ յորում բռնաւորեաց բարբարոսս այս, չմնաց չարիս՝ յորս ո՛չ
 « եղև ձեռնամուխ. ի սկիզբն բռնաւորելոյն իւրոյ՝ առ ռան եհար և ար-
 « համարեաց զաստուածային և զեկեղեցական օրէնս. էարկ զինքն ընդ
 « նզովիւք և ջանայ զազգն ևս ընդ ինքեան արկանել գործով և ա-
 « մենայն արարողութեամբ իւրով՝ գերազանցեաց քան զայլազգիս՝ որք
 « կաշառակուր եղեալ՝ ընտրեցին զսա. քանզի բարբարոսս այս չար
 « քան զդեկոս անաստուած՝ և եղբայրսպան ուրացողս, ամեննին ուրացեալ
 « զաւանդութիւն և զկարգ հայրենի, և կանոնս սրբազան հայրապետացն
 « կիսրապետի, արահամու և միւս արահամու կրեացոյն զազարու, մի-
 « նասայ, սահակայ, յակոբայ, սիմէօնի և զուկասու՝ ցանկանալով յափըշ-
 « տակութեան. յուսացաւ յանիրաւութիւնս. և զբռնաւորս բազում քա-
 « զաքաց յագեցուցանելով կաշառօք՝ կատարեաց զչար կամս անձին իւրոյ,
 « և ընծայեցուցեալ զանձն իւր բռնութեամբ, յափշտակէ զայս աստի-
 « ճան՝ որում չեր արժանի. աստուածագումար սուրբ միաբանութեանն և
 « բոլոր աստուածայնոցն արանցն ցրուելով զխորհուրդ՝ եղև աշծաթընտիր
 « զայթակղոս. . . . և առ ի պատրւակել զիւրն չարութիւն, բազում ան-

« գամ՝ զբազում մահսէր գրեալ ըստ կամս իւր՝ ի զիմաց միաբանից և
 « երկրացւոց՝ ի ջատագովութիւն ինքեան, ելից զնոսա ամենապատիկ ստու-
 « թեամբ՝ բռնութեամբ կնքել էտ և յղեաց ուր ունէր յղել... որք ա-
 « մենեքեան են սուտք և սնոտիք... Այլ դուք՝ զի խօհեմութեամբ ձերով
 « գիտացեալ ի գրութեանց և ի համբաւուց զապիրատութիւն սորա, իրա-
 « ւամբ և արդարութեամբ մերժեցիք զսա ի ձեռն երկուց հզօր կայսերաց
 « և փառաւորեցիք զարդար և զիրաւարարն աստուած. սա դուն գործէ վե-
 « ըըստին ընդ գիմանալ հրամանաց յաղթող կայսերաց և կամաց ազգին,
 « զի կացցէ ի բռնաւորութենէ իւրում հաստատուն. վատնէ զինչս հասա-
 « րակաց և զապրուստն միաբանից յում պետս, զի ինքն միայն բարուօք
 « ապրեացի, խանգարէ զազգն ի բարեկարգութեանց և զաթոռն ի պայծա-
 « ռութեանց, զի ինքն միայն պայծառացի զազատ կեանս միաբանից
 « գրաւեալ է ի գերութիւն, զի ազատապէս իշխեսցէ ի վերայ ամենից,
 « զկաշառատութեան յանցանս իւր ջանայ դնել ի վերայ ընտրելոյն
 « տեառն դանիէլի սրբազանին, զի ինքն անյանցանք երեւեսցի, վասնորոյ և
 « յանուն նորա զկնիք փորաքրել տուեալ, գրէ զթէմէսիւկս յանուն երեւանայ
 « խանու և այլոց՝ և առաքէ աստ և անդ, զի գայթակղեսցէ զպարզամիտ-
 « սընս Բայց եթէ կամք իցէր ընտրեալ հայրապետին մերոյ՝ կաշառօք դալ
 « և նստիլ յիւրն աթոռ, մեք յոյժ հեշտեալ բերէաք զնա. զի միաբանք
 « ամենեքեանք՝ հոգւով՝ ի նամք կապակցեալ... մինչ գողացեալ զսուրբ
 « դեղարդն և զայլ սրբութիւնս և զգանձս պատուականս, և բարձեալ
 « ձեռամբ ի վերայ գրաստու՝ առաքէր ի փլչելի տուն եղբօր իւրոյ, զոր
 « ըմբռնեաց և դարձոյց կենդանի նահատակ յօհաննէս արք եպիսկոպոսն,
 « ի վրէժխնդրութիւն բրդեալ՝ բոլոր միաբանութեամբ կամէաք զսա կոր-
 « ծանել յայնժամ. բայց բաղում երդմամբ և ազգի ազգի պատրանօք
 « խարեալ զմեզ առ ժամն, յետոյ բերել ետ ծածկաբար զպարսիկ զին-
 « տրս՝ և նոքոք բռնացաւ ի վերայ մեր՝ մահու չափ սպառնացմամբ, որով
 « և մեք յակամայ կամս տանէաք, զոր ինչ առնէր մինչև ցայժմ. և ոչ
 « խօսէաք ինչ առ երկիրդիս բայց իբրև տեսաք՝ թէ անցանէ և ըստ չափ
 « բարբարոսական գործք սորա, զմահ յանձն առեալ ընդ գիմացաք յայտ-
 « նապէս ընդ գիմացելոյն աստուծոյ... քանզի ի մէջ աւագ շարաթու՝
 « քեաց յերեւան առ գործոյ իրիք, և նա տեսեալ զգործս իւր և գտեալ
 « ժամ գիպուկ՝ խոյս տուեալ էր անտի ի թիֆլիզ հոգտանիլ ազատու-
 « թեան սրբոյ տանս և միաբանութեանս մերոյ... և յաւուր մեռելոցի
 « զատկին գիտացեալ սա, ըստ իւրն անբարի ընաւորութեան կատաղեցաւ
 « դադանաբար, և կալեալ էարկ ի բանտ խաւարային զխաղար եպիսկոպոսն
 « ծերունի խոստովանահայրն ղուկասու հոգելոյս վեհին (որոյ սրբութեան

« Համբաւն՝ իցէ թէ՛ հասեալ իցէ յունկն ձեր, և ծանուցեալ իցէ ամե-
 « նիցդ.) և զնորընծայ տէր կարապետ արեղայ մի՝ որ զքառասունս պահեր
 « յեկեղեցւոյ՝ եդ յայլում բանտի՝ առեալ զփիլոնն և զվեղարն. և
 « զայլ ոմն վարդապետ՝ յակոր անուն, եդ յայլում բանտի զոտս երիցն
 « ևս շղթայեաց և պատրաստեալ ետ զփայտս, զի յայլ միաբանս ձեռ-
 « նարկեսցէ՝ և ի գիշերի գանակոծ արասցէ զամենեսեանսն. նմին իրի
 « միաբանք ամենեքեան ապաւինեալ յաստուած, դիմեցաք ի վեհարանն
 « քարիւ և փայտիւ՝ և հանաք զեղբարսն մեր ի բանտից և ի կապանաց.
 « և ապա խուռն բազմութեամբ գնացաք յեկեղեցին, եպիսկոպոսք՝ վար-
 « գապետք, արեղայք և սարկաւագունք և բոլոր ուխտք եկեղեցւոյ. և
 « քննութիւն արարեալ՝ գտաք զսա ընդդէմ՝ աստուածային և եկեղեցա-
 « կան օրինաց, խանգարիչ բարեկարգութեան ազգին, և աւերիչ սրբոյ
 « աթոռոյս. վասնորոյ ուխտեցաք առաջի քրիստոսաէջ սուրբ անդւոյս, զի
 « բարձցուք զչարն ի միջոյ, և ի հաստատութիւն բանիս՝ գրեցաք գիր մի
 « առ ինքն դաւիթն, թէ վասն զանազան անկարգութեանց և բարբարոսա-
 « կան գործոց քոց՝ ոչ ընդունիմք զքեզ. և միանգամայն նզովեցաք զին-
 « քն և զհամախոհս նորա. և ի միւսում աւուր յերեքշաբաթի օրն
 « զատկի, եպիսկոպոսունք՝ վարդապետք՝ արեղայք՝ սարկաւագունք և ման-
 « կունք վարժատանն, բոլոր միաբանք՝ քանզի փակեալ էր զգրուսն, քա-
 « կեցաք զորմն հիւսիսոյ կողմանց՝ որհայի ի շուկայն, և իջեալ անգուստ,
 « խուռն բազմութեամբ դիմեցաք յերեան՝ յապարանս խանին և բողոքե-
 « ցաք ամենեքեան թէ՛ կամ բարձ ի միջոյ մերմէ զգողիաթն զայն՝ և
 « բեր զօրինաւոր հայրապետն մեր, և կամ սպան զմեզ զամենեսեան.
 « առ որ խանն զառաջին ունկնդիր եղեալ՝ խոստացաւ թէպէտ կատարել
 « զինդիր մեր, բայց յետոյ չնչաւատ մեղիքն ի ձեռն մեծագումար կաշա-
 « ռաց շրջեաց զմիտս նորա, որ ժխտեաց զխոստումն իւր, և դաժանա-
 « ցեալ ի վերայ միաբանութեանս՝ հրամայեաց գնել շղթայիւք ի բանտի
 « զաստուածատուր՝ զբարսեղ և զաւետիս եպիսկոպոսունսն, և պահանջել
 « ի նոցանէ զառգանս 9000 զուրուշ. իսկ զայլսն ամենայն զծերսն և
 « զտղայս մատնեաց ի ձեռն ծառայից իւրոց՝ որք ձիաւորեալք և զինա-
 « զարդեալք՝ ձգեցին զբազմութիւն քահանայակարգ միաբանիցն առաջի
 « երիվարաց իւրոց, և գանելով հարկանելով՝ գլխիբաց և բոկոտն հանին
 « ի ճանապարհ, և ստիպէին ընթանալ փութով, էր ժամանակն գիշերա-
 « յին. մութն, անձրևուտ և տղմուտ. ուստի ոմանք ի ծերոց եթէ յա-
 « մըր ընթանային, ուժգին գանէին, զի արագ ընթացեն. վասնորոյ ո-
 « մանք զոտս իւրոց հարկանէին զքարի. ոմանք անկանէին ի խորխորատ.
 « և ոմանք ո՛չ գտեալ զագանելիս, բոկոտն ընթանային զերկարաձիգ
 « ճանապարհն, որոց ոտք ծակոտեցան և վիրաւորեցան. և այսպէս տուայ-

« տանօք և տառապանօք՝ ողորմելի կերպիւ հասուցին զմեզ ի սուրբ աթո-
 « ռոս. և փակել զիւրաքանչիւրսն ի սենեակս իւրոց, արարին զբնակարա-
 « նըս մեր՝ մեղ բանտք և արգելանոցք, որ և ի լուսանալ առաօտուն ձայ-
 « նէաք ի ներքուստ՝ թէ բացէք զդուռնս մեր, զի գնացեալ արտաքս վա-
 « սըն կարեաց որովայնից մերոց՝ եկեսցուք, և ապա փակեցէք միւսան-
 « գամ՝ բայց ոչ դք էր՝ որ ունկնդիր լինէր. վասնորոյ նեղացեալ բա-
 « զումք, ոմանք կոտորեցին զսափորս ջրոց և յայնս հոգացին զպէտս ո-
 « թովայնից. որովայնից. ոմանք ի կոնքս. և այլք յայլ անօթս. զօրպիսիս
 « տեսեալ մեր երազ համարէաք. զի մինչև ցարդ ազատութեամբ եմք
 « անցուցեալ զկեանքս մեր. և չիք երբէք տեսեալ զայնպիսի անխիղճ
 « բռնութիւն, և ապա ի դիմաց միաբանից՝ տաճկերէն գիր գրել ետ առ
 « խանն՝ զայս օրինակ. եթէ դք ի մէնջ փախիցէ և կամ ուրեք զգիր ինչ
 « գրեսցէ, զի ըմբռնելն՝ գերծցէն զմօրուս նորա, և հարիւր թուման
 « տուածսցի. այսինքն 1250 զուրուշ. և եթէ դք ընդդիմացի կաթողիկո-
 « սին, նմա ևս զայս պատիժ հատուցեն. և հանեալ մի՝ մի՝ ի սենեկաց,
 « բռնութեամբ կնքել ետ իւրաքանչիւրսն զթուղթն զայն. և արձակեաց
 « զոմանս. բայց զքանի վարդապետն հանեալ ի սենեկաց իւրոց՝ արգել
 « յայլ և այլ բանտս. զարրահամ վարդապետն աժդարխանցի՝ արկ ի բանտ
 « խաւարային. զփիլիպպոս վարդապետն եւդոկիացի՝ յամբարն գարւոյ
 « զյակօբ վարդապետն պօլսեցի՝ ի սենեակ մի զազարապատին. զստեփան-
 « նոս վարդապետն յայլում սենեակի զազարապատին. զկարապետ արեղայն
 « նորընծայ՝ եդ յայլում բանտի. զփոքրաւորսն բարսեղ արք եպիսկոպո-
 « սի՝ զուէթէոս վարդապետն և զեփրեմ սարկաւազն ի միւսին յայլում
 « բանտի. և զղազար արք եպիսկոպոսն խոստովանահայր՝ յիւրում սե-
 « նեկի. Զայսոսիկ զամենեսեան եհան ի բանտէ՝ և նոցա ևս կնքել ետ
 « բռնութեամբ զտաճկական գիրն. բայց զազար եպիսկոպոսն և արահամ
 « վարդապետն՝ տակաւին կան ի բանտի. և երեք եպիսկոպոսունքն են յե-
 « րեան. և կնքել ետ զսենեակս աստուածատուր, բարսեղ, յովհաննէս և
 « աւետիս եպիսկոպոսացն. և զսենեակս արահամ վարդապետին և տի-
 « բացու իգնատիոսին, որ կան տակաւին այնպէս կնքեալք. և բերել ետ
 « ի խանէն զերեւելի տաճիկս. զի նոքօք յաւելցէ զբռնութիւն իւր ի վե-
 « րայ միաբանիցս. և մանաւանդ՝ զի լիցին ակնածու ընդ սպասաւորաց իւ-
 « րոց՝ որ մի կարացեն միաբանք խոյս տալ. և պահապանս եդ ի վերայ
 « ամենայն ճանապարհաց, զի մի կարացէ հանել ուրեք զգիր, կամ ա-
 « զատիլ փախստեամբ. Եթէ կամիցիմք մի ըստ միովէ բարբարոսական ա-
 « բարմունն նորա գրել, անբաւականանայ թուղթ և մելան. ուստի այսու
 « միայն համառօտեմք. զի եկաց սա յամենայն ճանապարհ՝ որ ոչ է բա-
 « րի. և ի չարէ երբէք սա ոչ ձանձրացաւ. և չունի ձանձրանալ ի բոլոր

կեանս իւր: Ապաքէն գիտացեալ ձեր զայսոսիկ կարեկից և ցաւակից լե-
րուք խղճալի միաբանութեանս, և զամենայն տառապանս մեր՝ անձանց
ձերոց համարեալ, ջանասցիք ազատել զաթոռն և զմեզ՝ ի ձեռանէ բար-
բարոսիս այսորիկ, որով և ընկալջիք զվարձս բարեաց յաստուծոյ և ժա-
ռանգեցջիք զաթոռս և զօրհնութիւնս սուրբ լուսաւորչին մերոյ:

ՎՃՈՒԱՀԱՏՈՒԹԻՒՆ ՄԵՆԻ ՍԻՒՆՀՈՒՈՍԻՍ:

ԲԱՆ, Դ.

Նաև տեսաք և ընթերցաք և զայլ բազում գրութիւնս, որոց ամենե-
ցուն համեմատութեամբ՝ գտաք զդաւիթն ամենեւին հակառակ կանոնաց,
և անընդունակ ընտրութիւն և օծութիւն նորա, որովք՝ եթէ օծեալ՝ և
եթէ չօծեալ, միև նոյն է. և ըստ հարցն կանոնաց՝ դատապարտէ օծու-
թիւն նորա զինքն, և զընդունողսն նորա, ըստ որում գրեալ է՝ թէ ար-
ժանի են մահու՝ ոչ միայն որք զչարն գործեն, այլ և որք կամակից լի-
նին գործեցեացն. ուստի խոտեցաք զնա ըստ բանի մարգարէին՝ թէ խո-
տեսցին այնորիկ ոյք ընտրեալ են արծաթով. և հրաժարեցաք ի նմանէ՝
որպէս ի թշնամւոյ եկեղեցւոյ. քանզի թշնամաբար և անողորմ պատա-
ռեաց նա զքօղ հարսինն անարատի՝ սրբոյ էջմիածնի, և քակեաց զցանկն
հայրենի յաղագս չար մոլութեան ագահութեան իւրոյ և փառասիրու-
թեան. և զի նա ինքն դաւիթ թիֆլիզեցի՝ փոխանակ զանձն իւր գնելոյ
ի վերայ հօտին քրիստոսի, զհօտն ողջոյն և զամենայն զկանոնս քրիստո-
նէութեան՝ ևս և զեկեղեցին աստուծոյ, և մանաւանդ զսուրբ աթոռն էջ-
միածին՝ յանդգնեցաւ դնել ի վերայ անձին իւրոյ անաստուածաբար, և
լաւ համարեցաւ եղծանել զամենայն, միայն զի ինքն կոչեցի ռաբբի,
Սմին իրի՝ և մեք համաձայնեալ հարցն սրբոց առաջնոց և վերջնոց, հարաք
զնա ի վէմն քրիստոս և դատապարտեցաք զնա ինքն զդաւիթ և զամե-
նայն համախոհսն իւր դատապարտութեամբն եկեղեցւոյ. մինչև զղջացեալ
ապաշխարեսցեն, և դիմեալ յոտս օրինաւոր սրբազանին, գտցեն զաղա-
տութիւն ինքեանց:

կոչումն՝ տեսաւ զանիւլի ի հայրապետութիւն ի զանազան ժամանակս
և արժանապէս օծումն:

ԲԱՆ, (Ե)

Եւ ի վերայ այսր ամենայնի՝ ընթերցաք դարձեալ և զն. բազմակնիք
գրութիւնս միաբանութեանն սրբոյ էջմիածնի, որ ըստ կանոնի՝ եկեղեցա-

կանք և ժողովրդականք ժողովեալ ի մի՝ ընտրեալ և յատկացուցեալ զտէր
 դանիէլ սրբազանն, գրեալ են առ նա յըսկըզբան անդ յետ վախճանի ե-
 րանեալ հայրապետն տեառն ղուկասուս ի (1800) ամի յունվարի (16)
 և 531. ապրիլի և 3 ևս 23. որովք ամենեքումք առաւել թախանձա-
 նօք յորդորեն զնա իջանել ի պատրիարքական աթոռոյն սրբոյ էջմիածնի.
 առ որ և զսուր սարսափելիս առաջի արարեալ նմա՛գրեն ի միումն այսպէս.
 կոչէ զքեզ տէր աստուած ի կոչումն սուրբ, մի արհամարհեր զնովաւ.
 կոչէ զքեզ տէր քրիստոս . . մի խուսափեր. այլ հայեցեալ ի գրեցեալսն
 երջանկացեալ այսինքն, ի մովսէս՝ յեսայի և յերեմիա և յայլսն, փու-
 թա կամաւորութեամբ կոչողին զհետ՝ քրիստոսի տեառն մերոյ. զի ար-
 դար նոյն ինքն է՝ որ զքեզ որոշեալ հրաւիրէ փոխանորդել իւր. որում
 եթէ ոչ անսպցես, ոչ բարեոք առնես. և առաջի նորա ձեռն մեր ի քո
 գրապանս մնայ. և դու կաս և մնաս մեզ՝ և սրբոյ էջմիածնի՝ և ամենայն
 Լաւութեան և վատութեան մեր պարտական, և զի. դանիէլ սրբազանն ա-
 հիւն աստուծոյ ունին դիր եղև հեղաբար յանուն աստուծոյ գրելոցն,
 որով և յաքսորս ցնաց և տսռապէցաւ. արդարացոյց զանձն իւր, և ընդ
 դիմակք նորա՝ որպէս ընդ դիմակք աստուծոյ, և առ ի նմանէ սուրբ հրա-
 ւիրանացն, կան և մնան պարտական նորին վասն ամենայնի և եղելու-
 թեանցն և անօրինակ անցիցն, նաև ընթերցաք զմիւս բազմակնիք բոլոր
 միաբանութեանն առ նոյն դանիէլ սրբազանն, գրեալ յետ վախճանի յով-
 սեփայ անուանեալ կաթողիկոսին. յամի 1801 մարտի 21. յորում ևս
 առարկեն զայս թէ՝ քանզի յովսէփ արք եպիսկոպոսն եկեալ ի տփիսիս
 քաղաք՝ վախճանեցաւ անդ, հաւատամք եթէ ի բարեբար կամացն աստու-
 ծոյ եղև որ ինչ եղևն. վասնորոյ՝ ի նորոյ ևս ժողով արարեալ հանդերձ
 քահանայիւք իշխանօք և ժողովրդովք երկրիս՝ ընդ աստուածային ազդե-
 ցութեանն և ըստ առաջնոյ ընտրութեանն մերոյ, վերստին զամենապատ-
 ուական հայրդ մեր ընտրեցաք լինիլ գահակալ սրբոյ աթոռոյս, և կաթո-
 ղիկոս և տէր հոգեւոր՝ հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ և ընաւից պաշ-
 տօնէիցս . . . ապաքէն անցեալն անցեալ դնելով՝ միամտութեամբ փու-
 թացես զշնորհաբեր գալուստդ, զի ահա տէր է՝ որ յաջողէ և կոչէ
 զսրբութիւնդ գալ պսակիլ նախնաբար քեզ նշանեցեալ անարատ հարսինն
 լուսոյ, առ ի կապարել զինդիրս ծառայից իւրոց՝ զոր հաստատուն հա-
 ւատով խնդրէաք ի վաղուց հետէ, և աներկբայ յուսով սպասէաք ընդու-
 նիլ. վասնորոյ և սրբութեանդ հարկ է հնազանդիլ տեառն կոչողին զքեզ
 ի յոյս գերագոյն պատիւ քահանայապետութեան, և լսել ձայնի աղաչանաց
 մերոց՝ և այլն. Ընթերցաք և զայլ բազմակնիքս՝ ի սոյն միտ գրեալ ընդ
 սմա՝ առ հասարակութիւնն թօխաթու քաղաքի՝ ի նոյն թիւ՝ խնդիր, զի
 առաքեցեն զդանիէլ սրբազանն. յորս էր և կնիքն դաւթի չորիցս. մա-

նաւանդ՝ զի և ինքն իսկ էր առաջին մահսերատարն ի պօլիս, ուր ի հրաշափառ տաճարի սրբուհւոյ աստուածածնին, որ զուսմափուլ առաջի ամենայն ժողովրդեանն՝ յանդիման կացեալ սրբութեան սեղանոյն, բերանով իւրով ասացեալ էր զաղօթսն՝ որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ սրբազան հայրտպետն մեր զտէր դանիէլ կաթողիկոսն, ևն, այլև ընթերցաք և զյատուկ ձեռագիրն նորին դաւթի առ դանիէլ սրբազանն ի թօխաթ. ուր՝ յետ այլ գրելոցն՝ ասէ . . . ես զբան սրբազան առաքելոյն ի միտ բերեմ թէ՛ ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցի կամ ընթանայցէ, ևն. Արդ թէպէտ բազումք կամեցան և ընթացան, այլ աստուած է՝ որ յաջողէ զամենեան, ևն, և ո՞վ է՝ որ աստուծոյ կամացն կացցէ հակառակ. որովհետեւ այսպէս է, աստուծոյ հրաշագործողէն զփառս և զգոհութիւնս վեր առաքեմ, և զքեզ ի նմանէ ընտրելոյդ և կոչեցելոյդ յորգորիչ լինիմ, զի հրամայեսցես գայցես ի յայցելութիւն սրբոյ տանս. ևն, իսկ արդ քանզի բազումք են որք վկայենն վասն դանիէլի սրբազանին՝ թէ աստուած է, որ կոչէ զքեզ, յայտ է թէ ճշմարիտ է. քանզի ձայն բազմաց՝ նմանի ձայնին աստուծոյ. ասէ մարգարէն:

Իսկ զի դաւթին ևս բերանով և ձեռագրով իւրով վկայեաց ճշմարտութեանն. և գործովք իւրովք հակառակ եկաց. յայտնի է թէ յանդգնեցաւ նա՝ ընդդէմ ծանուցեալ ճշմարտութեանն. որ այն իսկ է հայհոյութիւն հոգւոյն սրբոյ՝ ըստ գրոց. և զի հայհոյիչ եղև հոգւոյն սրբոյ. յայտ է թէ՛ անընդունակ է նորին շնորհաց, թէ և բազմիցս՝ բոլոր անձամբն իսկ ընկղմեցի ի մեռօնն սրբալոյս, ապա՝ ամենայն իրօք արժանապէս ընկալաւ նա զգատապարտութիւն իւր. փոխանակ՝ զի կամեցաւ զշնորհն երկնաւորին ստանալ արծաթով յարանց բարբարոսաց. զոր սիմոն մոգ՝ յառաքելոց անտի ստանալ նովին եղանակաւ ո՛չ կարաց. Յետ ամենայնի՝ ընթերցաք և զմահսեր համահաճութեանն պօլսեցւոց և այլոց քաղաքաց մերազանց՝ գրեալ առ դանիէլ սրբազանն և առ բոլոր միաբանութեանն սրբոյ էջմիածնի, յամի՝ (1802) յունվարի. և կնքեալ աւելի քան զ(500) կնքովք հոգեւորականաց և մարմնաւորականաց, ուստի և մեք համաձայնեալ նոցին ընտրութեանց, ընտրեցաք՝ և մանաւանդ թէ ընկալաք արժանապէս ընտրեալն ի բազմաց՝ զաէր դանիէլ սրբազան արք եպիսկոպոսն. որ և յամսոյս (25) հեղմամբ սրբալոյս մեռօնին յարժանաւոր դագաթ նորա, օծաք զնա օծութեամբ սուրբ հոգւոյն աստուծոյ՝ կաթողիկոս և քահանայապետ ամենայն հայոցս և ծայրագոյն պատրիարկ սրբոյ էջմիածնի, զոր (տէր աստուած հաստատունս պահեսցէ ամօք պարագայիւք) եղեալ ի գլուխ սրբոց սիօնի՝ իբրև զճրագ լուսալիր՝ փայլեալ առաւել պայծառութեամբ, լինել լուսատու ոգւոց խաւարելոց, պարծանք սրբոյ եկեղեցւոյ, ըստ նմանութեան հեղինակին իւրոյ և հօրն մերոյ գրիգորի լուսա-

ւորչին, և որպէս պատուեաց զսա Ճշմարիտ աստուածային օրինօք ընտրութեամբն և օծութեամբն, նոյնպէս և ի ձեռն արժանաւոր քահանայապետութենէ սորին քաւեսցէ տէր աստուած զամենայն ըզ յանցանս կենդանեաց և ննջելոց ազգիս հայոց, եւ շնորհիւ հեղման սրբալոյս մեռնին ի պատուական գլուխ քրիստոսատիպ սրբազան քահանայապետիս, իջէ հոգին սուրբ աստուած ի ժողով սուրբ լուսաւորչերամ հաւատացելոցս, աղբերացուցանել զմեծ զօղորմութիւնս իւր, որով և շնորհեսցէ սրբոյ եկեղեցոյ իւրում զմեծ խաղաղութիւն, և ամենայն ուխտի մանկանց նորին, զկատարեալ մխիթարութիւն և լրացեալ ուրախութիւն, ամէն, Բայց քանզի գրեալ է թէ լինէին սուտ մարգարէք ի ժողովրդեանն իսրայէլի, որպէս յանէս և յամիէլսն, և ի ձեզ լինիցին սուտ վարդապետք՝ որք սպրդել մոծանեն հերձուածս կորստեան և զորս տէրն գնեաց՝ զնոսա ուրացեալք անեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ, յաղագս որոյ զգուշացուցանելով պատուիրեմք, և մանաւանդ թէ սիրովն քրիստոսի աղաչեմք, մի իւրք տալ տեղի այնպիսեաց սուտ վարդապետութեանց, քանզի ահաւասիկ առաջի արարաք համառօտիւ ամենայն հեռաւորացդ և մերձաւորացդ՝ զարդարն և զճշմարիտն ամենայն անցիցն անցելոց՝ ընդ որս և զվճիռ դատապարտութեան դաւթի թիֆլիզեցւոյ, և օրինաւորապէս ընկալման աստուածընտիր հայրապետիս մերոյ տեառն դանիէլի սրբազան կաթողիկոսի և ընդհանրական քահանայապետի ամենայն հայոցս՝ և ծայրագոյն պատրիարքի սրբոյ էջմիածնի մայր աթոռոյն, վկաութեամբն աստուծոյ՝ և սուրբ աւետարանի նորա, արդար դատաստանաւ և սուրբ սիւնհոգոսիս մերոյ, Ապա հայտնհետէ՝ որ որ բերանով կամ գրով խօսեսցի ընդ ձեզ զայլս՝ ներհակ դատաստանի յանուն աստուծոյ ժողովելոցս, ծանիջիք զայնպիսին՝ ըստ առաքելոյն՝ վարդապետ ստութեան, մոծանող հերձուածոց և խռովութեանց յազգս և յեկեղեցիս մեր, յորոց և խորշելով խորշեալիք, զի թոյնք իժից են ի ներքոյ շրթանց նոցա, և նոքա են մշակք անիրաւութեան, քանզի այնպիսին՝ եթէ կամիցին զընտրութիւն և դաւթի արգարացուցանել, ստէ յայտնապէս, մինչ ահաւասիկ ի ձեռն կաշառաց և բռնութեամբ այլազգեաց լինելն՝ յայտնի է ի գրելոց միաբանիցն առ երեւնու խան և թիֆլիզու խանն, իսկ եթէ առարկեսցէ թէ օծեալ էր դաւթին, և ի վերայ այնր չէր պարտ զայլս օծանել, զսո՛ ոչ որ զանձն ընծայեցուցանէ նա է ընտրեալ, այլ զոր տէրն ընծայեցուցանէ, ըստ որոյ և ժողով 2500 հարցն՝ զմիւս դաւթի ապօրինիւնաւորութեամբ օծեալն՝ ի մասնակցութենէ քրիստոնէութեան ևս հատանէ, մանաւանդ ևս՝ զի ոչ եթէ մեք հակառակ նմա օծաք զսրբազան տէրս մեր, այլ նա ինքն հակառակ սմա օծաւ յառաջագոյն, ուրանալով ըզ ծանուցեալ ճըշ-

մարտութիւնն զայն՝ զոր յառաջագոյն ձեռագրով իւրով խոստովան լինէր՝
 թէ աստուած է որ կոչէ զքեզ. և ո՞վ է որ աստուծոյ կամացն կացցէ
 հակառակ. այլ եթէ ըզտեղի պատճառեցէ այնպիսին. թէ օրինաւոր
 սրբազան օծաւ ալտաքոյ սուրբ էջմիածնի, օծեալ են օրինաւորութեամբ
 ընդհանրական կաթողիկոս ամենայն հայոց. որպէս և ի մերձանաց ժամա-
 նակի տէր կարապետ ունեցի՝ որ ի կոստանդնուպօլիս օծաւ ի միջագիւղն
 և ձեռնադրեաց զեպիսկոպոսունս. և ապա եկն ի սուրբ աթոռն զկնի ժա-
 մանակաց. մանաւանդ և զի ո՛չ իսկ համարեցեալ լինի այս տեղի արտա-
 քոյ քան զսուրբ աթոռն. ըստ որում և նախնիքն երանելիք՝ ի միասին
 են գրեցուցեալ ի հրովարտակն արքունի՝ տեղի կաթողիկոսաց. որ ոչ է
 թարց հարկաւոր և մեծամեծ խորհրդական պատճառանաց. տինա՝ զի լա-
 ւագոյն է լինել՝ օրինաւորութեամբ արտաքոյ, քան աստուած ընդդէմ
 ապօրինաւորութեամբ ի տաճարին. առ որ և տէրն վշտացեալ ասէր. տուն
 իմ տուն աղօթից կոչի, և դուք արարիք զդա այրս աւազակաց, և զի պի-
 տոյ է երկարել վասն այլոցն. մինչ քրիստոսական է վճիռն՝ թէ այսու
 ծանիջիք՝ եթէ իմ էք աշակերտք, եթէ սիրիցէք զմիմանս. և եթէ՝
 սուտն ի հօրէ սատանայէ է. և թէ՝ ամենայն որ ատեայ զեղբայրն
 իւր ի տարապարտուց, պարտաւոր լիցի գեհնին. առ որ և աւետա-
 րանիչն երկրորդեալ ասէ. ամենայն որ ատեայ զեղբայրն իւր՝ մարդասպան
 է. և դիտէք՝ զի ամենայն մարդասպան ո՛չ ունի կեանս յաւիտենականս
 յանձին հաստատեալ. ապաքէն և բանք՝ մերումս աստուածային սուրբ
 սիւնհոգոսիս այսու կնքիսցեն, թէ դաւիթն, որ ատեաց զեղբայր իւր ի
 տարապարտուց և կորոյս յանձնէ զկեանս յաւիտենականս. եղիցի և ձեզ
 ատելի ինքն և համախոհքն իւր և վարդապետք ստութեան նոցին՝ հան-
 դերձ չարանիւթ պատիր վարդապետութեամբք նոցին, եւ զայս ի վերջոյ
 արժան դատեցաք ծանուցանել օրհնեալ ազգիդ մերում՝ եթէ ի վերոյ գըր-
 եալ դաւթէ դաւաճանէ ձեռնադրեցեալ եպիսկոպոսքն. և ի նոյանէ ձեռ-
 նադրեալ քահանայք և այլ ամենայն աստիճանաւորք՝ անընդունակք են
 եկեղեցւոյ սրբոյ, և բոլոր ազգի մերում. ըստ հրամանի տեառն մերոյ
 յիսուսի քրիստոսի որ ասէ. միթէ ի փշոյ քաղիցեն խաղող, կամ ի տա-
 տասկէ թուզ, և թէ ծառ չար պտուղ չար առնէ, այլովքն հանդերձ,
 ուստի ենթադատեցաք առանց ամենայն հակառակութեան. ի փշոյ և ի
 տատասկէ դաւթէ յայնմանէ յառաջեցեալն փուշ և տատասկ գոլ. և ոչ
 խաղող և ո՛չ թուզ. որք արժանապէս հերձեալք են և եղիցին. մինչև
 զղջացին և դիմեցեն առ ոտս հոգեւնտիր կայսերակոչ և ազգահրաւէր
 տեառն դանիէլի սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, և զսպեղանիս
 ի նմանէ գտանել հնարեսցին, և ընկալցին զներումն և զթողութիւն, և
 տէր որ կոչեաց և արգարացոյց և փառաւորս արար զընտրեալսն իւր իսկըզ-

բանէ՝ զտէր դանիէլ սրբազան կաթողիկոսն ամենայն հայոցս, պայծառացուցէ զգաւազան իշխանութեան սորա, և արասցէ զսա պարծանք ազգի. և սիւն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ՝ և զձեզ զամենեսին ընդ հովանեաւ քրիստոսատիպ սորայս բարի հովուութեան տածելով ի վայրի գալարեջ և ի ջուրս հանգստեան, պահեսցէ հանդերձ զարմիւք և զաւակօք անփորձ կենօք և անւան ժամանակօք ամենայն բարօրութեամբ, և անտըրտում ուրախութեամբ:

Ողջ լերուք և շնորհք տեառն աստուծոյ ընդ հոգւոյդ ձերում: ամէն:

ԱՆՈՒԱՆՔ՝ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅՆ՝ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ:

- 1 կարապետ կաթողիկոս աթմամարայ:
- 2 գէորգ եպիսկոպոս՝ Թադէոս առաքելոյ առաջնորդ:
- 3 յովհաննէս եպիսկոպոս՝ միաբան մշու սուրբ կարապետու:
- 4 գրիգոր եպիսկոպոս առաջնորդ բաղէշու:
- 5 մարտիրոս եպիսկոպոս՝ միաբան սուրբ էջմիածնի:
- 6 յովհաննէս եպիսկոպոս՝ երկոտասան առաքելոց առաջնորդ:
- 7 անտօն եպիսկոպոս՝ սուրբ աղբերկայ:
- 8 գրիգոր եպիսկոպոս առաջնորդ բալուայ:
- 9 փիլիպպոս եպիսկոպոս՝ առաջնորդ խարբերդու:
- 10 գրիգոր եպիսկոպոս՝ առաջնորդ սեբաստիոյ:
- 11 արրահամ եպիսկոպոս սուրբ սահակայ:
- 12 կարապետ եպիսկոպոս:
- 13 մանուէլ եպիսկոպոս՝ վարդի հօր վանից:
- 14 արրահամ եպիսկոպոս դերջանու:
- 15 սահակ վարդապետ իւջ քիլիսայու:
- 16 աւետիս վարդապետ Ժամ՝ օրհնող
- 17 դալուստ վարդապետ լուսարար: